## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» հուլիսի 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արևիկ Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի հուլիսի 08-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Արխիվացման ծառայություններ | 16 000 000 |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլ. փոստի հասցեն |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ | info@armarchives.am |
| ООО "Агреколь" | aagrecole@yahoo.com |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հուլիսի 10-ին՝ ժամը 11:30-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝ Արևիկ Հարությունյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» հուլիսի 2019թ.

Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահող՝*

Արևիկ Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու,

*հանձնաժողովի անդամներ՝*

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում էր՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

*Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արևիկ Հարությունյանը:*

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի կասեցման վերաբերյալ.

2019 թվականի հուլիսի 08-ին www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակել է հայտարարություն «Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված բողոքի վերաբերյալ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Հանձնաժողովի

Նախագահող՝ Արևիկ Հարությունյան

Անդամներ՝

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» օգոստոսի 2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Գնահատող հանձնաժողովի նիստից բացակայում էին **Արևիկ Հարությունյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու և **Կարեն Մելքոնյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով կասեցված գնման ընթացակարգը շարունակելու վերաբերյալ.**

Հիմք ընդունելով www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում 06.08.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հրապարակած «Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված բողոքի վերաբերյալ որոշումը՝ գնահատող հաննձնաժողովը որոշեց շարունակել հանձնաժողովի գործունեությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի և ООО "Агреколь"-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

4.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

4.2. ООО "Агреколь"-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ գնահատելիս առաջացել է ՀՀ ֆինանսների նախարարությանը /Լիազոր մարմնին/ դիմելու և մեթոդական օժանդակություն ստանալու անհրաժեշտություն, քանի որ ընթացակարգին մասնակցած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցը՝ ООО "Агреколь"-ն հայտում ներառվող փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը (Հավելված 2) հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը ստորագրող անձին տրամադրված է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից: Վերոգրյալով պայմանավորված՝ Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մեթոդական օժանդակություն ստանալու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն /Լիազոր մարմնին/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Մասնակիցների առաջարկած գներն են.**

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ | | | ООО "Агреколь" | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Արխիվացման ծառայություններ | 13 000 000 | 2 600 000 | **15 600 000** | 15 000 000 | - | **15 000 000** |

**Հանձնաժողովը որոշեց.**

**- գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Լիազոր մարմնից պատասխան գրության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3 , դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝ Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀՇՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» օգոստոսի 2019թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Գնահատող հանձնաժողովի նիստից բացակայում էին **Արևիկ Հարությունյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու և **Կարեն Մելքոնյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տեղեկություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ.**

Ի պատասխան Դատական դեպարտամենտի 09.08.2019 թվականի թիվ ԴԴ-1-Ե-7113 գրության /կցվում է/՝ 16.08.2019 թվականին Լիազոր մարմնից ստացվել է 15.08.2019 թվականի թիվ 01.1/26-1/13606-2019 գրությունը /կցվում է/: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, 41-րդ կետը, 32-րդ կետի 12-րդ ենթակետը, ինչպես նաև Լիազոր մարմնի նշված գրությունը՝ հանձնաժողովը որոշեց ՕՕՕ "Агреколь"-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. օգոստոսի 22-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

**-ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. օգոստոսի 23-ին, ժամը 10:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝ Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-770, Ֆաքս: (00374 10) 583734

№ ԴԴ-1 4-7113

<<09>> օգոստոսի 2019 թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Կ. ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բրուտյան,

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ խնդրում ենք տրամադրել մեթոդական օժանդակություն հետևյալ հարցի վերաբերյալ.

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Դիտարկվող դեպքում գնման ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, ընթացակարգին մասնակցած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցը հայտում ներառվող փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը (Հավելված 2) հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը ստորագրող անձին տրամադրված է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում ենք պարզաբանման կարգով հայտնել, արդյո՞ք նշված դեպքում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ մասնակցի կողմից հայտով ներկայացվող փաստաթղթերի Կարգով սահմանված վավերականության պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցին շտկելու հնարավորություն տալը, թե մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և
գնումների համակարգման վարչություն,
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ (+37410) 511-788, 511-787

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 033

N ___01.1/26-1/13606-2019_

<<_15_>> _օգոստոսի___2019 թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆԻՆ

Ի պատասխան 09.08.2019թ.թիվ
ԴԴ-1Ե-7113 գրության

05-11241
16 08 19

Հարգելի պարոն Փոլադյան

Ուսումնասիրելով հիշյալ գրությամբ բարձրացված հարցը՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով, իսկ 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետով նախատեսված կարգավորումները վերաբերում են մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկմանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան: Իսկ գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման հիշյալ կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Գնումների քաղաքականության
վարչություն, հեռ. 011 800258